ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

ՇԱՏԻՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Գ.Շատին

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

2016 թվականի ապրիլի 5-ին ժամը 15:00 -ին ՀՀ Վայոց ձոր մարզի Շատին համայնքում կայացավ համայնքի ընդհանուր ժողովը:
Ժողովին մասնակցում էին Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Ն. Սիմոնյանը, Շատին համայնքի ղեկավար Մ. Սմբատյանը, համայնքի ավագանին, համայնքապետարանի աշխատակազմը և համայնքի շուրջ 70 բնակիչներ:
Ժողովը ղեկավարում էր համայնքի ղեկավար Մ. Սմբատյանը, արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Լ.Գրիգորյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ – Շատին համայնքի ղեկավարի 2015 թվականին կատարած աշխատանքների հաշվետվության մասին:
Համայնքի ղեկավար Մ.Սմբատյանը ներկայացրեց 2015 թվականի ընթացքում կատարված հետևյալ աշխատանքները՝

ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍ

1. **Հողի հարկ՝ համայնքի վարչական տարածքում գտնվող հողերի համար-** պլանավորվել է 1200.0 հազ. դրամ, կատարվել՝ 1380.0 հազ. դրամ
2. **Գույքահարկ** -պլանավորվել է 2200.0 հազ. դրամ, կատարվել՝ 2868.0 հազ. դրամ
3. **Համայնքի սեփականություն համարվող հողի վարձավճարներ** - պլանավորվել է 569.2 հազ. դրամ, կատարվել՝ 778.7 հազ. դրամ
4. **Տեղական տուրքեր** - պլանավորվել է 162.0 հազ. դրամ, կատարվել՝ 467.2 հազ. դրամ

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

1. 2015 թվականի ընթացքում բարեկարգվել է համայնք մտնող ճանապարհամերձ հատվածը շուրջ 150մ, գյուղամիջյան հատվածը շուրջ 40 մետր
2. 2015 թվականին համայնքի բյուջեի միջոցների հաշվին կատարվել է համայնքի 1-ին փողոցի արտաքին լուսավորության 39-67 հատվածը, որը կազմում է 3921590 ՀՀ դրամ/
3. Տարվա ընթացքում կազմակերպվել և իրականացվել է աղբահանության աշխատանքներ և համայնքի փողոցներում տեղադրվել են աղբամաններ
4. 2015թ. մարտի 20-ից մինչև ապրիլի 20-ը հայտարարվել է սանիտարական միամսյակ,որի ընթացքում կատարվել են սանիտարական մաքրման,աղբահանման և ծառատնկման աշխատանքներ
5. Սոցիալապես անապահով ընտանիքներին տրվել է աջակցություն
6. Քաղաքաշինության բնագավառում համայնքի ղեկավարը ընդունել է որոշումներ, որոնք վերաբերում են փաստաթղթերի օրնականացմանը /հասցեների որոշումներ, ապօրինի կառույցների օրինականացում, շինարարության թույլտվություններ և այլն/

7. Բյուջեն եկամուտների մասով գերակատարվել է:
8. Հաշվետու ժամանակահատվածում հրավիրվել է թվով 11 ավագանու նիստ,որտեղ կայացվել է 38 որոշում,ընդունվել է համայնքի ղեկավարի 47 որոշում և արձակվել՝ 47 կարգադրություն, կատարվել է համայնքի ղեկավարի մոտ ընդունելություն և համայնքապետարան է մուտքագրվել 88 գրավոր դիմում:
9. Համայնքի բնակչությանը մատչելի գներով տրամադրվել է ազոտական պարարտանյութ և դիզելային վառելիք

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ

1. ՄԱԿ-ի զարգացման ծրագրի շրջանակներում Շատին համայնքում արդեն կատարվել է Եղեգիս գետի ափերի ամրացում:
2. Շատին համայնքում ընտանեական բժշկության ներդրման և զարգացման նպատակով <<Հռիփսիմե>> առողջության կենտրոն ՓԲԸ շենքի կառուցում: Կառուցվել է ՀՀ կառավարության և Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ իրականացվող վարկային ծրագրի և Շատին համայնքի համայնքապետարանի ներդրման շրջանակներում: Համայնքի ներդրումը կազմել է շուրջ 3 մլն դրամ: Գյուղական ամբուլատորիան սպասարկում է Եղեգնաձորի տարածաշրջանի 12 համայնքների:
3. <<Շատին համայնքի արոտօգտագործողների միավորում>> սպառողական կոոպերատիվի ստեղծում:

   Կոոպերատիվի գործունեության առարկան ու նպատակներն են համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ մշակված <<Համայնքի արոտավայրերի կառավարման և անասնապահության զարգացման պլանի>> իրականացման միջով.

   - Բարձրացնել համայնքից վարձակալած արոտավայրերի օգտագործման արդյունավետությունը,
   - Ավելացնել Կոոպերատիվի անդամների սեփականության հանդիսացող խոշոր և մանր եղջերավոր անասունների կաթնատվությունը և մաստվությունը,
   - աջակցել Կոոպերատիվի անդամներին կաթի, մսի որակի և արտադրության քանակի ավելացման, կենդանիների ցեղի բարելավման, նոր շուկաների որոնման և ինքնարժեքի իջեցման հարցերում,
   - նպաստել գյուղատնտեսության զարգացմանը տարածաշրջանում,
   - օժանդակել գյուղացիական տնտեսություններին հողամասերի մշակման, պարարտանյութերի և բույսերի պաշտպանության միջոցների ձեռքբերման ու օգտագործման, ինչպես նաև գյուղատնտեսական արտադրանքի մշակման և իրացման գործում,
   - օժանդակել արոտների արդյունավետ կառավարմանը, շրջակա միջավայրի պահպանությանը, նպաստել բնապահպանական խնդիրների լուծմանը,
   - կազմակերպել ուսուցողական և տեղեկատվական դասընթացներ Կոոպեարտիվի անդամների համար գյուղատնտեսության բոլոր բնագավառներին առնչվող հարցերով
4. Շատին համայնքը համագործակցելով ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսավորվող Գյուղի Զարգացման ԱՐԴԻ Նախաձեռնություն ծրագրի հետ (որն իրականացվում է <<Ֆուլեր Տնաշինական Կենտրոն>> ԲՀԿ-ի և <<Հեյֆեր Փրոջեքթ Ինթերնեյշնլ>> հայկական մասնաճյուղի կողմից), Շատին համայնքում իրականացվում է ջրախմոցների կառուցման աշխատանքներ:

5. Ռազմավարական զարգացման գործակալություն ՀԿ կողմից իրականացվող <<Անասնապահության զարգացում Հարավային Կովկասում>> ծրագրին մասնակցություն ունի նաև Շատին համայնքը, որի շրջանակներում համայնքի մի շարք բնակիչներ մասնակեցել են <<ԽԵԿ-երի փոխարինման>> բաղադրիչին :
6. Ռազմավարական զարգացման գործակալություն ՀԿ կողմից իրականացվող <<Անասնապահության զարգացում Հարավային Կովկասում>> ծրագրի իրականացման արդյունքում Շատին համայնքում անասնաբուժական և կենդանիների արհեստական սերմնավորման ծառայությունների շրջանակներում ստեղծվել է անասնաբուժական սպասարկման կետ: Համայնքը որպես ներդրում անհատույց տրամադրել է սպասարկման կետի տարածք :
7. «Ֆուլեր Տնաշինական Կենտրոն» բարեգործական հասարակական կազմակերպությունը Շատին համայնքում արդեն երկար տարիներ իրականացնում է մի շարք ծրագրեր : Մասնավորապես 2014-2015թթ. Կազմակերության աջակցությամբ ստեղծվել են 3 հյուրատներ:
8. 2015 թվականի ընթացքում «Ֆուլեր Տնաշինական Կենտրոն» բարեգործական հասարակական կազմակերպությունը և ՎիվաՍել-ՄՏՍ ՓԲԸ աջակցությամբ կառուցվել է 2 տուն, և վերանորոգվել 2 տանիք :

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- **Եղեռնի 100 ամյակին նվիրված միջոցառումներ**

Համայնքում կազմակերպվեցին մի շարք միջոցառումներ՝ երիտասարդների նախաձեռնությամբ բարձրադիր լեռների լանջերին գրվեցին ,,1915-2015 Հիշում եմ և պահանջում'' ի հիշատակ Եղեռնի նահատակներին, գյուղապետարանի գրադարանում կազմակերպվեց ցուցահանդես՝ որում ներկայացվեցին այն հեղինակները, որոնք զոհ գնացին 1915թ. Ցեղասպանությանը և լույս ընծայվեց պատի թերթ ,,Հիշում եմ և պահանջում" խորագրով:
Այնուհետև ապրիլի 23-ին Շատինի գյուղապետարանի և դպրոցի աջակցությամբ կազմակերպվեց ջահերով երթ՝ համայնքի կենտրոնից դեպի 1941թ. Հայրենական Մեծ պատերազմում զոհվածների հուշարձան: Երթին մասնակցում էին համայնքի հարյուրավոր բնակիչներ: Մինչ երթը սկսելը բոլոր մասնակիցներին բաժանվեցին Հայոց Մեծ Եղեռնը խորհրդանշող ,,Անմոռուկներ": Տեղ հասնելուն պես մասնակիցները մեկ րոպե լռությամբ հարգեցին Ցեղասպանությանը զոհ դարձած 1,5 միլիոն հայերի հիշատակը և տերունական աղոթքով հարյուրավոր մոմեր վառվեցին նրանց հոգիների հանգստության համար:
Միջոցառումները եզրափակվեցին ապրիլի 24-ի երեկոյան համայնքը շրջապատող սարերի գագաթներին կրակներ վառելով:

- **Մայիսյան հերոսամարտերին նվիրված միջոցառում Շատին համայնքում**

Մայիսի 9-ին Շատին համայնքում տեղի ունեցավ տոնական միջոցառում նվիրված Հայրենական Մեծ պատերազմի հաղթանակի և Շուշիի ազատագրման օրվան: Միջոցառումը տեղի ունեցավ համայնքում Հայրենական պատերազմում զոհվածների հիշատակին կառուցված հուշարձանի մոտ:
Միջոցառումը սկսվեց տոնական համերգով, որին մասնակցում էին Շատինի միջնակարգ դպրոցի աշակերտները: Միջոցառմանը մասնակցում էին նաև Արցախի ազատագրմանը

մասնակցած ազատամարտիկները: Մասնակիցները ի հիշատակ զոհվածների ծաղիկներ դրեցին հուշարձանին:

- **<<Մեկ քայլ, մեկ գիտելիք>> արշավ-սեմինար դեպի Շատիվանք**

Նպատակը՝ կազմակերպել սեմինար-արշավներ համայնքի երիտասարդների համար դեպի տարածաշրջանի պատմամշակութային վայրեր, և յուրաքանչյուր վայրում իրականացնել մեկ սեմինար-քննարկում՝ նպատակ ունենալով բարձրացնել երիտասարդների իրազեկվածության և ներգրավվման մակարդակը ՏԻՄ ոլորտում:

- **Անկախության օրվան նվիրված միջոցառում Շատին համայնքում**

Սեպտեմբերի 22-ին Շատին համայնքի դպրոցի դահլիճում տեղի ունեցավ միջոցառում՝ նվիրված Հայաստանի Հանրապետության Անկախության օրվան: Միջոցառումը կազմակերպվել էր դպրոցականների կողմից, որին մասնակցում էր նաև Շատին համայնքի պարի խումբը: Միջոցառմանը ներկա էին դպրոցականներ, ուսուցիչներ, համայնքի բնակիչներ: Միջոցառումը կազմակերպվել էր Շատին համայնքի գյուղապետարանի աջակցությամբ:

- **Բերքի Տոն 2015**

Շատին համայնքը լավագույնս ներկայացավ տոնին՝ ներկայացնելով համայնքի բերք ու բարիքը և գրավեց 3-րդ հորիզոնականը:

- **Աղբահանություն Շատիվանքում և դրա հարակից տարածքներում**

Շատիվանքի ուխտագնացության և Շատին համայնքի օրվան՝ նոյեմբերի 7-ին ընդառաջ, նոյեմբերի 5-ին, Շատինի գյուղապետարանի, <<ՄԵԿ ՔԱՅԼ,ՄԵԿ ԳԻՏԵԼԻՔ>> արշավ-սեմինարների մասնակիցների, դպրոցի մի խումբ աշակերտների, իրենց ուսուցչի և աշակերտական խորհրդի նախագահի հետ կատարվեցին մաքրման աշխատանքներ Շատիվանքում և դրա հարակից տարածքներում: Կամավորները մեծ եռանդով մաքրեցին իրենց իսկ համայնքի խորհրդանիշ համարվող պատմամշակութային համալիրի տարածքը:

- **Շատիվանքում նշվեց Շատիվանքի ուխտագնացության և Շատին համայնքի օրը**

Նոյեմբերի 7-ին Շատիվանքի վանական համալիրում նշվեց արդեն ավանդույթ դարձած Շատիվանքի ուխտի և Շատին համայնքի օրը: Եղեգնաձորի տարածաշրջանի հոգևոր հովիվ Տեր-Վազգեն քահանա Հովհաննիսյանը մատուցեց պատարագ, այնուհետև կատարեց մկրտման արարողություն և օրհնեց մատուցվող մատաղը: Միջոցառումը կազմակերպվել էր համայնքի ղեկավարի կողմից:

- **Շատինի գյուղապետարանի նվերները համայնքի երեխաներին Նոր տարվա կապակցությամբ**

Այս տարի ևս Շատինի համայնքապետարանը պատրաստել էր նվերներ համայնքի երիեխաներին՝ նոր տարվա կապակցությամբ:
Ձմեռ պապն ու Ձյունանուշը մասնակցեցին երեխաների տարեմուտի միջոցառմանը, լսեցին երեխաների ցանկությունները և շնորհավորելով փոքրիկներին գալիք Ամանորի կապակցությամբ հանձնեցին նվերներ:
Նվերներ ստացան համայնքի 0-12 տարեկան բոլոր երեխաները:

- **Շատին համայնքի գյուղապետարանի կողմից կազմակերպված ամանորյա հումորա - համերգային միջոցառում**

Դեկտեմբերի 25-ին Շատին համայնքի մշակույթի տանը տեղի ունեցավ հումորա-համերգային միջոցառում՝ կազմակերպված Շատին համայնքի համայնքապետարանի աշխատակազմի կողմից:
Հումորա-համերգային միջոցառումը ներկայացնում էին համայնքի տաղանդավոր երիտասարդները: Միջոցառումը նվիրված էր Նոր տարվան՝ անդրադարձ կատարելով նաև համայնքային կյանքին, որը ներկայացվեց հումորի տեսքով:

Համայնքի ղեկավարը ներկայացրեց նաև 2016 թվականի անելիքների մասին:

Առաջարկվեց 2015 թվականի համայնքի ղեկավարի հաշվետվությանը տալ հավանություն:

ԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ

Հավանություն տալ Համայնքի ղեկավարի 2015 թվականին կատարած աշխատանքների հաշվետվությանը:

Շատին համայնքի ղեկավար՝ Մ.Սմբատյան

Արձանագրող՝ Լ.Գրիգորյան